

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
Ե, ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

Կրթութիւն պէտք է ուղղել առ

ՏՆՏԵՐԱՆ ԱՐՇԱՆՈՅՍ ԴՐԱԳՐԻ


ԳՅՆԻՔ (Եգիպտոս)

E. TOROSSIAN

Direc.-prop. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՄԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՊՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն.	60
Վեշտիւնայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան »	20
Վեշտիւնայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խնայարութեան վրայ է :

Խնայարութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելու են

ԽՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ա.ՉԴ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն
կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարւոյ բա-
ժանորդագրի նրկեղ Տնօրինութեան հաս-
ցէին :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. բաժանորդներէն
աչ ջերմասէս կը խնդրուի, որ բարեհաւի
նախորդ տարիէն մնացեալ պարտոց կցե-
լով նրկեղ նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ Տարեշրջա-
նի բաժանորդագրի, եւ հարկ չը քողոյ
մասնաւոր դիմումներու, որով ճշտ
ուարուի մը պիտի ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ
տարիէն բազմազարդ Տնօրինութեան :

ՍԻՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մինչեւ թուրք կայսրութիւնը իր թա-
փած անհամար Հայերու արեան ովկէանին
մէջ չ'խղրուելու համար կը տապալուի, և
իր երիտասարդ թուրքերու ոչ այնքան յըս-
տակ՝ յայտարարութեանց և մեկնութեան
կարօտ բացազանցութեանց արձագանքնե-
րէն՝ թերեւ իրաւամբ՝ վարհուրած կ'երևի,
անդին փոքրածիւ երկրիս չորս հովերուն
ցրուած ժողովուրդ մը, որ՝ ըստ Սրբազան
և աշխարհիկ պատմութեան՝ իբր պետու-
թիւն իր գոյութիւնն և իր զօրութիւնն ա-
պացուցած է գարիւր առաջ, այսօր կ'սկսի
գարձեալ տեսարան ելլել աննշարելի կեր-
պով, և ձեռքն ունենալով ուղեգիծ մը,
որուն ուսումնասիրութիւնը խիստ չահեկան
է մանաւանդ մեզի համար, սա տեսակէտով
որ այդ ժողովուրդն ալ կը փախաբի մաս
մը կորզել այն հողէն, որուն վրայ կը տե-
րապետէ Սուլթանական կառավարութիւնը :

Հրէայ ժողովուրդն է այս որ Սիօնիսթ
անուամբ խաղաղասիրաբար և անձայն ան-
չուկ կը գործէ ու կը գործէ քսան տարիէ
ի վեր :

Անոնց ուշագրաւ նպատակը լաւ ըմբռ-
նելու համար դիմենք « Ժուրնալ տը ժընէվ »
ի, որ իր 1898 Մայիս 6 թուոյն մէջ հե-
տեալ մանրամասնութիւնը կը նուիրէ մեծա-
մեծ տէրութեանց բազմանքներուն մասնակ-
ցելու յաւակնոտ այդ աննշան ժողովուրդին :

1. - Սիօնիսթներն ինչ կուզեն :

Սիօնականները, Հրէից կանոնաւոր
գաղթումով ի Պաղեստին, կ'ուզեն՝ ոչ միայն
կ'աղմեկ Հրէական ընկերութիւն մը, այլ և
կերպարանափոխել իրենց այժմեայ տնտե-
սական կ'աղմեկութիւնը . վաճառական

ժողովուրդը գարձեալ ընել երկրագործ,
արհեստաւոր և աշխատասէր ժողովուրդ
մը : Սիօնիսթները այս դիտաւորութեան կը
ժառայեն այն համոզումով որ իրենց ազ-
գային և կրօնական ապագայն կը նախապատ-
րաստէ իրենց ապագայն հրէական հողին
վրայ, որ իրենց բնագաւառն է :

— Ինչ են Սիօնիսթները :

Սիօնիսթները կուսակցութիւն մը չ'են
կազմեր : Հրէայ մը կրնայ Սիօնիսթ ըլլալ
և միանգամայն որ և է կուսակցութեան մը
պատկանիլ : Սիօնականութիւնը իր մէջ կը
պարունակէ Հրէից ամեն մասերը . ընդհա-
նուր առմամբ Սիօնիսթները ազբատ, խոշ-
տանդուած, կամ յուզայականութեան ներ-
շնչումին հնազանդող անձեր են :

— Ո՞րքէ ծագում առաւ այս տեսակ
ժամանակակից կրօնք մը :

Հրէայ ժողովուրդը երբէք չ'մոռցաւ
իր վաղեմի հայրենիքը, որ ահանաւոր վը-
կայ եղաւ իր զօրութեան և իր մեծու-
թեան : Երուսաղէմին և Սիօնի լեռներուն
յիշատակը բուն հիմն է անոր հաւատքին :
1860 և 1870 ի մօտ Իսրայէլ իր անցեալը
մոռնալու տրամադիր էր . վասնզի եւրոպա-
կան մէկէ աւելի տէրութիւններ իրենց երկ-
րացիներուն հաւասար իրաւունք տուին
նաև հրէաներուն : Բայց յանկարծ խոչն-
գոտի մը մ'առջև գտնուեցան . որ էր՝ նո-
րածին հակահրէութիւնը : Պատմական այս
անիրաւութիւնը պէտք է փոխարինուի,
խորհեցան հրէաներէն ոմանք : 1880 ին ըս-
կիզբը, երբ հրէական գաղութը աւելի շեշ-
տուեցաւ, մեծամասնութիւնը գնաց Պաղէս-
տին և հոն վերսկսաւ իր նախնեաց զօր-
մունքին, այսինքն երկրագործութեան և
այգեգործութեան : Եւ հիմա քսան եօթը
գաղթականութիւններ կան Պաղեստինու և
Սուրիայի մէջ, ուր 15000 հոգի հողը կը
հերկեն : Եւրոպական բազմածիւ քաղաք-
ներու մէջ Գարմէլի ընկերութեան գործա-
կալութիւններ կան, որոնք Հրէից արտադ-
րած գինիներ և ըմպելիներ կը ծախեն :

Երկայն կ'ըլլայ Հրէից այս շարժումին
հետեւիլ քայլ առ քայլ : Բաւականանք մի-
այն ըսելով թէ՛ եւրոպայի ամեն կողմը և
նոյն իսկ յՄԱՅրիկա հաստատուած են մաս-
նաւոր ընկերութիւններ և երեսունէ աւելի
պարբերականներ, որոնք կը քարոզեն մի-
ևնոյն գաղափարը . գաղթել ի Պաղէստին :

Ունին նաև տարեկան ժողովներ, որոնք
կը վերջանան կենսական որոշումներով :

Այս տարուան ժողովը բացուեցաւ Լոն-
տոն : Ընկերութեանց անդամներուն ամա-
վճարն է « Սիկը » մը, հին դրամ երբայս-

կան, որ կը համապատասխանէ մէկ ֆրանքի :
Այս հանգանակութեան նպատակն է ունե-
նալ գրամագլուխ մը 250 միլիօն ֆրանքի .
անհրաժեշտ գումար գնելու համար
Պաղէստինը : Կ'երևայ թէ թուրք կառավա-
րութիւնը այս գինը պահանջած է վերջնա-
կանապէս :

Չմոռնանք ըսելու որ հրէից մեծ աղա-
ները թէև ամապճարուածներ չ'ունին, բայց
իւրաքանչիւրը, տարուան մը մէջ 12 թուա-
նշանին աջ կողմը երեք չորս կ'ըրիկ զօ-
ներ ալ աւելցնելով կուսայ առանց պոռա-
լու և առանց սաստելու

Տասնութը գարէ ի վեր կորսուած հայ-
րենիք մը վերստանալ ուղղ ժողովուրդի
մը խանդն ու աւիւնը և ձեռնարկած մի-
ջոցները կրնան գաս մ'ըլլալ իր հայրենի
հողը ձգելով դէպ' օտար աստղեր դիմող
գրեթէ բաղդակից ուրիշ ժողովուրդի մը . . .

ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ

ՍԵՂՄԻՐԱՆԸ (forus)

Առ Հայ Տիկնայս եւ Օրիորդս

Անցեալ օր բարեկամներէս միոյն տունը
գտնուած պահուած Հայ օրիորդի մը անակնկալ
այցելութեան առհարկի առանձնաշնորհումը վա-
յելելու բաղձն ունեցայ : Ուշ գրաւող առաջին
բանն էր ուշիմ օրիորդին անուշադիր սեթեւե-
թըն ու բոնագրօսիկ շարժումները : Շատ մ'ենակ-
եաց կեանքի մը սիրահարն ըլլալ կը թուէր :
Ճշմարիտ է թէ արտաքին շարժումները յաճախ
կը մատնեն ներքին զգացումները, ինչպէս այս
պարագային հիւրեկ օրիորդին գիբը՝ որ գող-
ցես իր մէջ անդրադարձած կը ճգնէր լուծել իր
բնաւորութիւնը յատկանշող երեւոյթներէն
ձեւացած երեւակայական խօլ անեղծուածը :

Բաւ լիցի թէ նպատակ ունենած քննա-
գատել գինք այս էջերուն մէջ, ըստ որում ա-
հիբէ հասած օրէս ի վեր՝ իր բնորոշ նկարագրէն
տարբեր ու գերազանց արտայայտութիւն կամ
կենցաղավարութիւն մը գրեթէ չ'տեսայ արդէն
իր սեռին քով : Այլասերունք հոս ալ խորապէս
արմատ ձգած կը տիրապետէ, և մ'անաւանդ մեր
մէջ, չ'ունենալով անհրաժեշտ ու անմիջական
միջոցներ արմատաքի խլելու համար այդ օտա-
րամուտ որոմներն, սովորոյթ ու նորոյթ կոչ-
ուած առողջակործան գործաւալներն մեր գաշ-
տէն՝ որ շատ աւելի կոյս է բաղդատամբ օտա-
րին :

Վշտագին ու մտազբաղ կացութեան մը
ներքեւ ընկճողներ անբացատրելի յանկուցիչ
զօրութեամբ մը կը գրաւեն գրեթէ չըջապա-
տողներուն ուրուշը : Չէի կրնար ստիկ դիտելով
բաւականանալ աչքիս առջև պարզուող այս հո-
գեները տեսարանին հանդէպ Որպէսզի

օրինորդին հետ աւելի համարձակ խօսելու արտօնութիւնն ունենամ, սկսայ նախ վերաբերուիլ իրեն ընկերացող փոքրիկ ու սիրուն աղջկան հետ՝ զոր « մօրս հոգեդաւակը » կը յորջորջէր : Օրինորդը աչքով ու աղանջով անվերջ հետեւեցաւ մեր երկուքին, եւ հուսկ ուրեմն՝ կողմնակի եղած զանազան ու զարմանազան խօսակցութեանէն վերջ, խնդրեց զարձաւ սեղմիբանին վրայ, ինչու որ օրինորդը այդ արհեստով կ'ըզբաղէր, եւ կը բաղձար ներբողել զայն բանիւ ու գործով իր հիւրընկալ — հանդիսորդներուն :

Խորհրդաւոր ժամը ներկայացած էր : Չէի կրնար այլեւս լուռ մնալ խղճիս բողբոջներուն դէմ . ի սէր մարդկութեան եւ ազգութեան հարկ էր պարզել ճշմարտութիւնը, եւ վայելչօրէն օրինորդին աչքին առջեւ պատկերացնել իր տարածու կազմութեան, եւ հետեւաբար այդ անկերպարան վիճակէն արտածնող սեւեւամտածման ու տխուր, չոր բնակորութեան պատճառն եղող սեղմիբանը իր բոլոր անշահութեամբը : Պատուաւոր միջավայրի մը մէջ երկուստեք եղած գաղափարային այս բանակոխը երկուքս ալ յուզեցին : Օրինորդը չ'ուզեց այլեւս երկարել ջախջախուած շատագովութիւնները՝ սեղմիբանին մէջ շնչահեղձ չ'ըլլալու խոհեմ զգուշութեամբ մը : Սակայն . ցաւալի է որ՝ ի վերջոյ, բացակայութեան օգուտ քաղելով, խորունկ շունչ մը առած եւ վերաբերել բացառապէս իրենք ըրած է ինձ նկատմամբ ներկայ եղողներուն : Շատ ուրախ պիտի ըլլայի, սպասուող շնչուած տեսնելով մեր մէջէն, կեղծաւորութեան գնուած նկարագիրը, որոյ կարելիութիւնը կախում ունի իր երկու սեռին մէջ հոգեկան, մշտաւորական ու մարմնական կորովի ու անբիծ բարոյականութեան ներմուծուելէն : Ամենքս ալ գիտեցք որ՝ այսօր գրեթէ անհրաժեշտ պէտք մը զարձած է թոքերու կարեւորագոյն ու անմիջական պաշտօնը խանգարող այս պախճաւանդը, որով առողջաբանութիւնը լրջօրէն զբաղիլ ըսկսած է սարիներէ ի վեր, Ո՛հ եւ ստորութիւն երեքք ստոր չափ բունապետական եղած չ'է, եւ զոր կը դատապարտեն մարմնոյն մէջ՝ անկէ յառաջ եկող բազմաթիւ հիւանդութիւններն ու չարքերն : Բժիշկները այսօր ամեն ուրեք կը դատախազեն սեղմիբանին, որպէս եւ մէջքը սեղմող այլազան գօտիներուն ու կամարներուն եւ ազդրներուն վերեւէն ծանրօրէն կախուող չըջող գետններուն դէմ : Ինչպէս որ նեղ ու սրածայր կօշիկը կ'արգիլէ արեան շրջանը, կը տնեւէ ուքը, կը նուազեցնէ սրունքներուն բնական ջերմութիւնը եւ բիթիները (նասըր) ու կոշտեր կը պատճառէ, նմանապէս սեղմիբանը կը սեղմէ թոքերն ու կողերը, կը խափանէ խորունկ ու բնական շնչառութիւնը, բերանը միշտ բաց

թողելու կը հարկադրէ՝ յորմէ անհաշուելի անպատեհութիւններ կը ծագին . կը սեղափոխէ ներքին փափուկ գործարանները՝ որոյ վշտառիթ արքասիքն կ'ըլլայ ցաւագին մարտողութիւն, զբզականութիւն, արքանդախեղք, վիժում եւ դժուար ծննդաբերութիւն :

(Շարունակելի)
ՏՐ . Կ . Գ . ՈՒԶՈՒՆԵԱՆ

Թ Է Մ Է Լ Լ Ա Հ Ն Ե Ր

Պօլսոյ կառավարական մէկ բարձրագոյն վարժարանի ուսանողներէն միոյն գըրած նամակէն կը քաղենք հետեւեալը .

Հ . Ծ .
Առաջին . « Միւտիւր Պէյ կէլիօր » ձայնը կը ցնցէ վարժարանին ընդարձակ սրահը, եւ դեռ այդ անձունին չ'երեւցած մենք խմբովին թէմէլլահ մը կ'ընենք, միայն անունը լսած ըլլալուս համար : Ու ահա ներս կը մտնէ ան, թէմէլլահ . տեղը կը նստի, թէմէլլահ . տղաքն հոս ամբողջ են կը հարցնէ, թէմէլլահ . ի՞նչ է այսօրուան դասերին, կրկին հարցման, թէմէլլահ . կը հազայ, թէմէլլահ . կը թքնէ թէմէլլահ . կը շարժի, թէմէլլահ . կը նայի, թէմէլլահ . — նստեցէ՛ք կը հրամայէ, թէմէլլահ . եւ այլն եւ այլն :

Երկրորդ . Կը պատահի որ սանդուխներէն ելած ժամանակնիս, դասատու մը եկած բակին մէջ կօշիկները նոր կը հանէ մենք պարտաւորուած ենք սպասել ուր որ ենք, նոյն իսկ եթէ սանդուխներուն գըրուին եղած լինինք . որպէս զի դայ ան ու մեզմէ առաջ ներս մտնէ մեր թէմէլլահներով ողջունուած . սակայն ասոնցմէ եւ ոչ մին թէմէլլահ կ'ընէ մեր թէմէլլահներուն փոխարէն :

Երրորդ . Պէտք կ'զգանք գործարան երթալու . ոչ եղանակ որոշուած է այդ առթիւ, ոչ ալ ազատ ենք մեր ուզած ժամանակ հանդատանալու երթալ իբրև մարդ . ինչ որ օրէնք է ամենուս համար ահաւասիկ . կառավարիչ հօճան նստած է աթոռի մը վրայ . տեղերնիտ նստած պիտի սպասէք որ ան ձեր կողմը նայի : Այլ դուք ձեր բաղդին . ո՞վ գիտէ թէ ե՞րբ պիտի վա-

յելէք թշուառականին շնորհը . քառօրդ կամ կէս ժամ վերջ հաղիւ հազ դիպուածը կ'օգնէ ձեզ . եթէ փախցուցիք առիթը, վայր եկած է վրանիտ . իսկ եթէ կրցաք ատենին ոտքի ելլել ու թէմէլլահ մը ընել ակնածանօք, շիսթաւալա՛մ մը հարցումը կ'ընդունիք աօթէ կաս կարմիր կտրած . եւ այն ինչ՝ իբրեւ այո՛ի նշան, թէմէլլահնիտ կ'ընէք . « հայտէ՛ կիթ փաթլա » փաթլամիչ ըլլալու արտօնութիւնը կը ստանաք եւ թէմէլլահով մը դուրս կ'ելլէք գործարան երթալու : Վերադարձին թէմէլլահ մ'ալ ըրած տեղերնիտ կը նստիք ու այսպէս չորս հինգ թէմէլլահով, երկու փաթլամայով գործերնիդ ըրած դասերնիդ կը շարունակէք :

Ահա մեր ուսանողութեան է՛ն թօհաֆ ժամերու մէկ մասը :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՆՈՐԱՏԵՍՍԱԿ ՏՈՒՆ ՄԸ . — Աշխարհիս մէջ միայն ամերիկացիներն են որ միշտ անհեթեթ գաղափարներ ունին . այս օրերս կ'իմանանք անգղիական թերթերէն թէ Եօրքայտի կոմսութեան մէջ Պրէտֆօրթի չըջակայքը բնակող արհեստաւոր մը իրեն համար ամարանոց մը շինել տուեր է որուն բոլոր արտաքին պատերը կոճակ ծնած են, վարտիքի կոճակ, ժագէթի կոճակ, բաճկոնի կոճակ, շապիկի եւ թեւոցի կոճակ, կօշիկի կոճակ, պղինձէ, փայտէ . սատափէ, գորրօցցօէ, ոսկորէ, յախճապակիէ, դագատէ, կաշիէ, արծաթէ, ոսկիէ եւ նոյն իսկ թանկագին քարերէ կոճակներ : Արուեստաւորը բոլոր այս կոճակները գործածած է իր ամարանոցի զարդարանքին համար որ ընդարձակ եւ հանդատաւէտ տուն մ'է երկու յարկով եւ շինուած է Բրէնսթընի ճամբուն մօտ իր սեփական գործատուներէն քիչ հեռու : Այս ամեն ծագումէ, ամեն ձեւէ եւ ամեն գոյնէ կոճակները — ընդամենը 166-000 երկվեցեակ է այսինքն 2 միլիօնի մօտ — հաստատուած են պատերուն վրայ պարզ երկաթէ ձողակով մը որ մէջտեղի ծակերէն անցած է եւ ամրապէս մոցուած է գածէ որմադրուազին մէջ :

Թ Ե Ր Թ Օ Ն

Ի Ն Չ Ո՛Ւ Զ Ե Ն Ք Յ Ա Չ Ո Ղ Ի Ր
ՏԵՍԻԼ Գ .
Արշալոյս (Թիւ 106 107 112 և 113)

Արտակարգ նիստ Ընդհ . Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ահաւասիկ ժամը երեքն է կէս ժամ կը մնայ մեզ խորհելու կամ կարգադրելու . Արդեօք ի՞նչպէս պէտք է ընել այդ խորհուրդներէն ոչ ոք ներս չի մտցնելու համար՝ եթէ որ եւ է ՆՇՈԱՐ մը ձեռք անցունելով հոս սպրդիլ ուղե՛ն . . . :

ՇԱԹՕԵԱՆ . — Այդ մասին Միւսիւ Խախտօրուծն մեզ վստահացուց եւ մեր իրեն ուղղած մէկ ակնարկը այդպիսի բան մը ընել յանդգնողին խերն անիծել կ'ուստայ :

ՎԱՊԻՊԵԱՆ . — Բայց մեզ՝ 40 հայերուս, կը վայելէ՞ մէկ խորհակցի պաշտպանութեանը տակ մտնել :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Քանի որ սրահը իրն է, իրեն կը պատկանի ի հարկին խաղաղութիւնը պահպանել :

ԹԱԹՕԵԱՆ . — Ես կը կարծեմ թէ տրամաբանական չէ օտարին ցոյց տալ որ 40 հայեր մէկ . . . սպրդած հայէ կը վախանն . . . :

ՇԱԹՕԵԱՆ . — Խնդրին այդ չէ . այդ մէկ կամ երկու անձերուն խերը ես կ'անիծեմ (' ' ') բայց կուզան կրկին գաղիական եւ անգղիական խառնուրդ պէտք է՛ ըլլայ կրտսն, ժողովականներն ալ անոնց կը ձայնակցին, ինչպէս եղաւ անցեալ անգամին . այն ատեն մենք ինչ պիտի ընենք . մեր այս ծրագրով եւ կամ այս հանրագրութիւնով, որ գիտէք թէ ինչ ձեւի տակ ստորագրել տրուած է, երբ մենք անոնք որ եւ է կերպով արտաքսել կ'ուզենք . . . կարելի՞ է զիրենք ընդունիլ այս վճռական ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Այո՛, այո՛, ես կ'առաջարկեմ անոնց դէմ խիստ միջոցներ ձեռք առնել այս օրուան ժողովոյ այս վեհ սրահին մէջ, կ'առաջարկեմ նաեւ որ պարոն Շաթօեան դրան առջեւ կենալով Արարողապետի պաշտօն կատարէ, նշխարներն ստուգելու համար . . . :

ԹՐ՛ՆԿ . . . ժամ 3 1 (2 կը նշանակէ . ահաւասիկ առանց թիւի կտուք մը . Դօնեան էֆ . ներս կը մտնէ . երկրորդ կտուք մը, երրորդ մը, չորրորդ մը : Հինգերորդը՝ որ հետիտան եկած էր . յանդիմանութեան արժանացաւ պատուելի արարողապետին կողմանէ : Բայց ի՞նչ կարելի է ընել . քանի մը կտուքերէ վերջ, ոտքով եկողներուն թիւը հետզհետէ շատցաւ, այնպէս որ՝ պարոն արարողապետը պարտաւորեցաւ իր պաշ-

տունէն հեռանալ, այդ անձնասիրութիւն չ'ունեցող անձերն ընդունելու հարկէն ազատ լինելու համար :

Վերջապէս նշխարներն (մտից տոմս) համրուելով ժողովականաց թիւը ամբողջ գտնուեցաւ : Ատենապետ էֆ . ն ժողովոյ բացումը յայտարարելու համար զանգակը հնչեցուց : Սրահի շքեղութեան վրայ սքանչացող ժողովականներ ի կարգ հրաւիրելու . որոնք անմիջապէս նստեցան կամ բազմոցներու մէջ թաղուեցան, լսելու համար Ատենապետ էֆ . ին , որ իւր բերանացի ձառն այսպէս սկսեց :

ՏԻԱՐԲ ՊԱՏՈՒԱԿԱՆԲ .

« Շատ բաղաւոր կը համարեմ ինքզինքս այսօր այս վեհ ու փառաւոր սրահին մէջ . . . այս սեղանին առջեւ . . . եւ ընկերութեան յառաջգիմութեան եւ զարգացման եւ բարձրացման . . . թոխիքներով ոգեւորեալ պատուական անդամոց հանդէպ բանալ այս ժողովը , որ անդրանիկ պիտի լինի իւր տեսակին մէջ . . . »

ՏԻԱՐԲ ՊԱՏՈՒԱԿԱՆԲ .

Արդէն գիտենք թէ՛ այս արտակարգ ժողովը ինչու համար գումարուած է . եւ արդէն վճռուած է պատուական ընկերաց ստորագրութեամբ, այն քանի մը խռովարարները հեռացնելու (չ'ըսեմ արտաքսելու) մեզանից, որպէս զի մենք ալ ազատ լինինք օր առաջ ԴՆՆԱԿԸ կառուցանելու եթէ դիտողութիւն մը չ'ունիք :

ԲԱՄՊԱԿԻ ԹԱԳԱՒՈՐԸ . — Ճարտարարուեստի և վաճառականութեան ամեն թագաւորները Եանքիներուն քով փնտուռելու են , ինչպէս նաև բամպակի թագաւորը . այս թագաւորը (քօթէն քինկ) Ռօպըրթ Նայթ կը կոչուի և 22 հատ մանարան և հիւսարան ունի , որոնք ցանցնուած են Բրովիտէնսի շուրջը երեք փարսախ տարածութեան վրայ : Այս զանազան արուեստանոցները և գործարանները 25000 գործաւոր և գործաւորուհի կ'ապրեցնեն : Կարկահներու թիւը 12000ը կ'անցնի իսկ ձողիկներուն թիւը 496000 ր :

Պ . Նայթի գլխաւոր մանարանը որ նէ . թիւք մօտ է 3200 կարկահ 10000 ձողիկ և 7000 աշխատաւոր ունի : Այս մանարանը այս տեսակ հաստատութեանց հսկան է , աշխարհի մէջ ատոր նմանը չ'կայ . ուրիշ գործատեղի մը կայ Ռենէր Բօինթ հաստատուած որ իր բարձրութեամբը նշանաւոր է , 64 մետր բարձրութիւն և 16 յարկ ունի : Բամպակի թագաւորին հարստութիւնը 260-300 միլիօն ֆրանքի մօտ բան մ'է :

— Գերմանացի գործաւոր մը անձայն վառօթի մը գիւտն ըրած է : Էսէնի (Գերմանիա) մէջ քանի մը մասնագէտներու առջև փորձեր կատարուեցան յաջողութեամբ : Մինչև ցարդ հնարիչը ոչ մէկու չ'է հաղորդած գաղտնիքը այս վառօթին , որ քիչ չը պիտի փոփոխէ ռազմային դրութիւնը :

Կ . ՊԱՍԷՆ կ'իմացնեն որ երկրորդի ոստիկանութիւնը Շահին հասնելէն օգտուելով խել մը դաւադրութիւններ և սպանութեան ծրագրերներ երևան հաներ է : Իւլէմաներու և սպաներու մէջէն շատեր ձերբակալուած են . բայց բանտարկուածներու մեծամասնութիւնը կը կազմուի . . . Հայերէ :

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԷՄԻՐ շոգեհաւը , որ Նորֆօլքէն (Ամերիկա) գալով Մանիլը կերթար 5817 թօնօ ամերիկեան հանքածուխով Սուէզի մօտ ընկղմած է ամառս 2 ին իրիկուան ժամը 11 ին :

ՀՆՈՒԳՐԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

Զինական խնդրոյ մէջ դաշնակից Տէրու .

արձանագրել պիտի տամ այս հանրագրութիւնը եւ այդ մէկ քանիները մերժուած պիտի հռչակեմ » :

ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԷ ՈՄՍՆՔ . — Չարմացած . շուրաւ իրենց բոլորովին անծանօթ , եղած առաջարկին վրայ , լուռութիւնը ընտրեցին . Լըռութիւնը ոսկի է , բայց շատ անգամ ալ երկարականութիւն է . վերջնայն պատկանողներ կային դժբաղդաբար ժողովականներուն մէջ :

Փէշկիւնեւ . — Դիտել կուտամ թէ այդ հանրագրութիւնը կրնայ միայն իբր ամբաստանագիր ծառայել : Կ'առաջարկեմ որ մասնախումբ մը կազմուի , խնդրը քննելու , ամբաստանեալները լսելու եւ ժողովին տեղեկագիր մը բերելու , որպէսզի ժողովականք իրենց արձակած վճռոյն մէջ չ'սխալին եւ ձեռնհաս համարուին :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ո՛չ , ո՛չ , մենք զի բնք լսել չ'ենք ուզեր

ՇԱԹՕԵԱՆ . — Մանաւանդ երբ ներկայ անդամք առանց բացառութեան ստորագրած են եւ կը խնդրեն անոնց արտաքսումը :

ՉԱՐԵԱՆ . — Արդեօք կարելի՞ է հասկնալ թէ՛ ինչ ձեւի տակ ստորագրուած է այդ հանրագրութիւնը

ԹԱԹՕԵԱՆ . — Ինչ ձեւի տակ կ'ուզէ թող լինի , անոնք տետրակներն ունին , մենք ալ փարաները . մենք անոնք չ'ենք ուզեր , վէ՛սէլամ

ԱՏԵՆԱՊԵՏ . — Այդ վճռուած իրողութիւն մ'է արդէն

Թեանց վարմունքը բացորոշ չ'է , և երբեմն ալ հակասական է , եթէ հասած հեռագիրները եղելութիւնները չ'են կերպարանափոխեր որ և է դիտուումը մը : Չինաց կայսրը գործնականապէս պատասխանելով Գերմանիոյ կայսր , որ զինք Բէքին կը հրաւիրէր , քիչ մ'աւելի հեռացաւ Սին-Կան-Ֆիւ . քաջութեամբ : Ի մասնաւորի Ֆրանսայի , Գերմանիոյ և Ռուսիոյ մէջ համաձայնութիւնը օրըստօրէ աւելի կը շեշտուի : Ամերիկա գրեթէ բոլորովին սպարեցէն քաջուած կ'երևայ . թերևս նա կը խորհի իր Ֆիլիբեան կղզիներուն ապստամբներուն , զոր չ'յաջողեցաւ նուաճել , և իր մօտալուտ նախագահական ընտրութեան : Անգղիան սրտէն մինչև վիզը այդ—նախարարական—ընտրութեան մէջ թաղուած է և՛ առ այժմ մեծ դեր մը խաղալու տրամադիր չ'երևար չինական խնդրոյ մէջ :

Թրանսվալի լուրերուն մէջ մեծ փոփոխութիւն մը չ'կայ . Պօէրները կը շարունակեն միևնոյն քաղաքիք , որ է՛ այսօր հրպատակիլ , վաղը ապստամբիլ : Հետևաբար անգղիական բանակներուն սպարապետը Լորտ Ռօպըրթս դեռ որոշապէս չ'է գիտցուցած իր վերագործի թուականը :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՍԻՆԵԱՆՔ . — Մէլիք . Ս . Դաւիթ Բէկի հրատարակած ԼՈՒՍԻՆԵԱՆՔ անուն գրքէն , որ ինչպէս ծանուցած էինք 400 կտոր Արաբիերի որբերուն նուիրուած էր հեղինակին կողմէ , այս անգամ յիշեալ գրքերը ամբողջովին զրկուած է Գահիրէի Հայոց Որբասիրաց ընկերութեան , և կը վաճառուի ի գին 10 դահեկան ողջ ի :

Բնականաբար մեր ազնիւ ազգայինք պիտի փափաքին ունենալ սոյն հեղինակութեանէն , երկու պատճառներով . նախ՝ ստարեկու համար Որբասիրական ձեռնարկին . երկրորդ՝ ունենալու համար հեղինակութիւն մը՝ որ խիստ չահեկան և միանգամայն կարի հետաքրքրական է :

ԵՐԻՏՅԱՆՔԻ ՄԸ , որ ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին երկար տարիներու փորձառութեամբ հմտացած է ,

Փէշկիւնեւ . — Ոչ մի օրէնք չի ներբեր եւ չ'ընդունիր առանց քննութեան վճիռ արձակել

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ինչ , անպատճառ պաշտպանել կ'ուզէք

Փէշկիւնեւ . — Ո՛չ . քմահաճոյքի դէմ օրէնք կ'ուզեմ

ՇԱԹՕԵԱՆ . — Խռովարքներուն համար օրէնք չ'կայ

Փէշկիւնեւ . — Կուր ընողները երկու մասի կը բաժնուին , արդարն կամ մեղաւորը ինչպէս պիտի զանազանուի . չէ՛ մի որ քննութեամբ . կը զարմանամ թէ՛ դուք ինչո՞ւ համար կը խուսափեք քննութիւն ընելէ , կ'երեւի գըլխովին անիրաւ ըլլալու էք . կամ ծածկելու բան մը ունիք

Ատենապետ է՞ք . զանգակը հնչեցուց եւ այս խնդիրը փակուած յայտարարեց . օրակարգի երկրորդ խնդրոյն դառնալով , Դղեակի բացման իրաւունքն ալ ձեռք բերուած էր : Ամսական քսան զուրուչ վճարող ազնուականներուն եւ սնօրէն ժողովոյ անդամոց կար եւ կարողութիւն մաղթելով , ատենը փակեց :

(Շարունակելի)

դրամագլուխի տէր մէկը կը փնտուէ ընկերանալու և միասին ժամագործի խանութ մը բանալու համար :

Դիմել Գաֆէ Եփրատ :

Հետեւեալ նամակն Գահիրէաբնակ Ակնցի Ազգայնոց Որբասիրատ Ընկերութեան Գործ . Ժողովէն ստացած ենք ի հրատարակութիւն :

. . . Տնօրինութիւն « Արշալոյս »

Լրագրի Խնդրենք Ձեր պատուական թերթին մէջ աւելին մը շնորհէք հետեւեալներուն :

Օմտուրմանի Ազգայիններէն տեղւոյս ազգային Առաջնորդարանի միջոցաւ Որբախնամ Ընկերութեան զրկուած հինգ (5) եզրիպտ . ոսկին , իւր ժամանակին ստացած ենք : Ուստի ներկայիւս հրապարակաւ մեր շնորհակալիքը կը յայտնենք :

Արտասահմանի Ազգայինք եթէ միևնոյն յալացութիւնը ընել բարեհաճին , կատարած պիտի լինին առաքինութեան ամենէն մեծ պարտականութիւնը , որն է օգնել անպաշտպան որբերու որք զուրկ են ամեն խնամքներէ :

Ընկերութիւնս կը փութայ յայտարարել թէ առաջին անգամ ըլլալով (Ն . Տ .) Օգոստոս 15 էն որդեգրած է երկու որբեր :

Նիկողոս Ա . Մանուկեան 11 տարեկան Ակն քաղաքէն :

Ստեփան Ն . Ղարիպեան 12 տարեկան . Կամարակապցի . որոնք կը խնամուին Ակնայ Ազգային Որբանոցին մէջ : Եւ մէկ տարուան ծախս երկու որբերուն համար զրկուած է 12 Օամ . ոսկի :

Ընդունեցէ՛ք կանխաւ մեր շնորհակալիքը :

Ի Դիմաց Ակնայ Որբախնամ Ընկ . Գործ .

Ժողովոյ

Ատենապետ Ա . ԷՍԿԻՃԵԱՆ Ս . Գ . ՓԱՓԱՋԵԱՆ 9 Հոկտ . 1900 Աստ .

ԻԳՆԱՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՅԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - Էլ - Հախիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգղիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ՔՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու , այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրախի դիմացը , նորաչէն խանութներուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախողք ըստ ամենայնի գոհ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով , եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր զճարուսներու փոխան , ձեւաւոր եւ ճաշակաւոր վզեասներ ունենալով :

ԶԻՆԱԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Քանի որ այսօր աշխարհն Չինական խելիքով զբաղած է , հոս կը դնենք քաղաքականութիւնը չինական ֆանի մը քառերու եւ անուններու , որով աւելորտ կը հետաքրքրեն մեր ընթերցողներէն շատերն :

Թունկ կը նշանակէ արեւելք . Սի՛ արեւմուտք . Նան՛ հարաւ Բէ՛ի՛ հիւսիս . Տի՛ն ֆի՛ն կամ ֆի՛նկ՛ մայրաքաղաք կամ գլխաւոր քաղաք . հետեւաբար , Բէ՛ֆի՛ն կը նշանակէ հիւսիսային մայրաքաղաք և Նանֆի՛ն հարաւային մայրաքաղաք : Թի՛նէն կը թարգմանուի՛ երկինք . Թի՛նէն-Չի՛ն՛ երկնային գլխաւոր քաղաք . Հօ կամ ֆի՛նկ կը նշանակէ՛ գետ . ուստի Բէ՛ի-Հօ՛ հիւսիսային

գետ . Սի-Քիսկի՝ արևմտեան գետ : Ե՛կ կը նշանակէ եօթը . Ե՛կ-Քիսկի՝ եօթը գետեր : Եան՝ լեռ . Եան-Քիսկի՝ արևելեան լեռ . Եան-Սի՝ արևմտեան լեռ : Բէ՛ սպիտակ . Բէ-Եան՝ սպիտակ լեռ : Հէ՛ կը նշանակէ ծով , և Քուան՝ դուռ . Հէ-Քուան՝ ծովային մաքատուն . ալիքն քն ծովին դուռը . և Եան-Հէ-Քուան՝ ծովին դրան լեռը : Եանկ կը թարգմանուի քաղաք . Եանկ Հէ կամ Եանկ-Հայ՝ ծովեզերեայ կամ ծովին մօտ քաղաք : Հօանկ՝ դեղին . Հօանկ-Հօ՝ դեղին գետ . Հօանկ-Հէ՝ դեղին ծով : Եանկ ովկիանոս . Ձէ՛ որդի . Եանկ Ձէ-Քիսկի՝ ովկիանոս որդին (գետ) : Թի-Են-Ցէ՛ երկնից որդին (կայսր) : Քի՛ կամ Քոն կը նշանակէ բերան կամ անցք , և Դա՛ մեծ կամ խիստ . Թա-Քի՛ մեծ բերան . Եան Քոն՝ հարաւային անցք (Մօն-կօրիայի) . Հի՛ լիճ . Լիկի՛ բլուր . Հի-անկ՝ գիւղ . Հի-Են՝ բաժանու նահանգ : Ֆի՛ կուսակալութիւն . Թէ կամ Թաի՛ նահանգային կառավարիչ և Ֆի-Թաի՛ կուսակալութեան կառավարիչ : Եա՛ կամ Քի-ա՛՝ կամուրջ . Լի՛ մղոն . Բա՛ ութը . ուստի Բա-Լի-Քիսո կը նշանակէ՝ ութը մղոն երկայնութեամբ կամուրջ : Եօ կամ Եօն՝ կայսրան . Թիանկ Եօն՝ արևելեան կայսրան (Բէքիսի մէջ) : Եէ՛ նահանգ . Եէ-անի՛ արևմտեան նահանգ : Եանէն կը նշանակէ ոստիկանատուն կամ պաշտօնատեղի . Հիէ՛ գաղտնի ընկերութիւն : Ձիկի՛ յտակ կամ մաքուր . Ձիկի-Քիսկի՛ գետ յտակ կաջուր . Թա-Ձիկի՛ խիստ յտակ (այժմեայ տիրող ցեղին յորջորջումը) : Քոն՝ կայսրութիւն . հետեւաբար Թա-Ձիկի-Քոն կը նշանակէ խիստ մաքուր կայսրութիւն (Ձի-նացոց) :

Եթէ ասիկէ ետքն ալ յարգոյ ընթերցողները անխառն չիկանէն մը խօսելու չը յաջողին յանցանքը մերը չէ :

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Նոր Կեանքի ի եւ Անանիոս ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբագրատունս դիմեն , գիւրագին զայնս գնելու :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

6278	3788	7951	7377	8982	8284
1927	6197	1929	2828	6146	2008
6524	4140	5054	1107	2410	275
6818	683	715	7227	18	8310
266	573	5697	477	1987	5418

ՀՅԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

6123	261	2572	3427	577	3
1117	1979	2410	3407	3957	4295
4441	5057	5727	6425	7230	8180
8750	8672	8611	8217	8763	8748
	8860	8906	9229		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնեալ 1 ՄԱՅԻՄ 1900

ՇԱՐԽԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ

Օտանկիյէ դեղատանին դիւնացի փողոցին մէջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Երջարտակաւներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մանկադրեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոկեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և չափաւոր գին .

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ .

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՍ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտիւն եւ նուագածուաց խմբի Զօրանցիկն ճիշտ դիւնացր

ՕՀԱՆԵԼՍ ՍԻՄՈՆԵԱՆ , ԵՒ

ԴԱՆԵԼԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ .

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար , կրնան դիմել ԵՓՐԱՏ ՍՐՃԱՐԱՆԸ , որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարդարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ դըրած է :

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները . ընտիր և թարմ օշարակներ , անխարդախ սուրճ և անխառն կաթ :

Մամաւոր խնամքով կը պատրաստուի նաև մրգաթան և չամչարակ (խոշապ) :

Հոն դիմող յաճախորդք գոհ պիտի մնան , գտնելով մաքուրութիւն , ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն , ամենէն խստապահանջները գոհացնելու աստիճան :

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՅԻ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ , կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օքսիտէ ժամացոյցներ . պատի և բօնսօլի բազմազան Բանտիւններ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գօղօկրաֆներու :

Ա Ձ Դ

Քլիի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Եանոսեանի որդի Պ . Կարապետ Եանոսեան 26 ամեայ Երիտասարդը Հայալինը դէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահրէտաբնակ ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ր կը գտնուի այդ Երիտասարդը :

Կը ինդրուի ուրեմն մեր Պատ . Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին , բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը ինդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն , որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ . ի հարկին նըմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱԽԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻԶ

Ականաւոր և հեղինակաւոր երածիշտներու ալակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուզողներն , կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԻՍՐԶԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵԻՈՐԸ

ԵՐԱՇԽԱՐԻՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՐՈՒԿ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամեցնէն աւելի շահարածիները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատիւրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ո՞ր և է ընթերթենէ մէկ միլեար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ ո՞ր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յ'Ազգայնագրիս :